

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

1 Ս. Զատիկի հրաշափառ տօնին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ եկեղեցւոյ Սրբազան Պատեօսն յղուած են հետեւեալ շնորհաւորական հեռագրերները:

Երուսաղէմ, 22 Ապրիլ 1984

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. էջմիածին

Ս. Զատիկի հրաշափառ տօնին բարեբաւօրիկ առիթով, խոնարհաբար կը ներկայացնենք Ձերդ Սուրբ Օծութեան մեր և Սրբոց Յակօբեանց Միաբանութեան պրտագին շնորհաւորութիւնները, խնդրելով Բարձրեալն Աստուծով որ շնորհէ Ձեզ յաջողութիւններով լի երկար և առողջ կեանք, և Մայր Աթոռ Ս. էջմիածնին՝ անսասանութիւն և բարգաւաճում:

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 22 Ապրիլ 1984

Նորին Սրբութիւն

Յովնանէս - Պօղոս Բ. Պապ

Վատիկան

Ս. Զատիկի հրաշափառ տօնին բարեբաւօրիկ առիթով, յարգանք կը ներկայացնենք Ձերդ Սրբութեան մեր սրտագին շնորհաւորութիւնները, մաղթելով Ձեզ շարունակական առողջութիւն և Ձեր մեծ եկեղեցիին՝ բարգաւաճում, Թող Ամենակարողն Աստուած յաջողութեամբ պսակէ Ձեր բարի ջանքերն ու ծրագրերները:

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 22 Ապրիլ 1984

Ն. Ամենապատուութիւն Պիմէն

Պատրիարք Համայն Ռուսիոյ

Մոսկուա

Ս. Զատիկի հրաշափառ տօնին առիթով, կը ներկայացնենք Ձեզ մեր եղբայրական և ջերմ շնորհաւորութիւնները, սրտագին մաղթանքներով Ձերդ Սրբութեան առաջնութեան և բարգաւաճ գործունէութեան համար:

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Պատրիարք Հայ Երուսաղէմի